



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք, ՀՀ
Վայոց Ձորի մարզ, Գ. Արենի, 15փ, Շ.3, Հեռ. 0281-6-00-01,
arenigyux@mail.ru

N 169
28 մարտ 2018թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի պատասխան Ձեր 18.01.2018 թվականի թիվ 01/08.1/303-18 գրության ներկայացնում ենք 2018թվականի մարտի 24-ին Արենի համայնքի ավագանու կողմից թիվ 41 որոշմամբ հաստատված Արենի համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

Աղդիր 2 էլեկտրոնային նյութ:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Կառ. Աշխատկազմի քարտուղար, Գ.Արենի, 15փ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
24 ՄԱՐՏԻ 2018 թվականի N 41

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ











Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Արենի համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10

Դեմ -0 Չեղմպահ -0

- 1. ԱՆԱՎԵՐԴՅԱՆ ԶԱՆԻԿ 
- 2. ԱՆՏՈՆՅԱՆ ԵԱԿԵՆ 
- 3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒԷՆԱԿԱՆ 
- 4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ 
- 5. ԽՐԱՅԵՆՅԱՆ ԱՐՇՐՈՒՆԻ 
- 6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ 
- 7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱԾԻԿ 
- 8. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ 
- 9. ՄԻՍՈՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ 
- 10. ՄԻՍՈՆՅԱՆ ՄԱՐԿՍ 





ՀՈՒՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

»


ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2018 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2018 թ. մարտի 24-ի թիվ 41 որոշմամբ

Արենի 2018

ՀՀ Վայոց ձորի մարզի, Արենի համայնքի Տարեկան աշխատանքային պլան

1 | էջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	3
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
3. ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	4
3.1 Աշխարհագրական դիրք, կլիմա, պատմական ակնարկ	4
4. ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	5
5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ	6
6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	8
6.1 Կրթություն	8
6.2 Մշակույթ և սպորտ	9
6.3 Առողջապահություն	10
6.4 Սոցիալական պաշտպանություն	10
7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	11
7.1 Գյուղատնտեսություն	11
7.2 Բնապահպանություն	13
8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ/ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	14
8.1 Ճանապարհաշինություն	14
8.2 Զբամատակարարում ու ջրահեռացում	14
9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	16
9.1 Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում	16
9.2 Քաղաքացիական հասարակություն	17
10. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	18
10.1 Արտաքին կապեր	18
10.2 Միջազգային կազմակերպություններ	18
10.3 Հիմնադրամներ	18
10.4 Զբոսաշրջություն	19

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀԶԾ – Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

ՏԱՊ – Տարեկան աշխատանքային պլան

ՏԻՍ – Տեղական ինքնակառավարման մարմին

ՓՄՁ – Փոքր և միջին ձեռնարկություններ

ՓՄՁ ԶԱԿ – Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն

ԱԱՊԿ – Առողջության առաջնային պահպանման կենտրոն

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ԳԱՄԿ – Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն

ՈԻՎԿ – Ունիվերսալ վարկային կազմակերպություն

ԳՊԼ – Գնիշիկ պահպանվող լանդշաֆտ

ՀԿՏՀ – Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգի

WWF-Հայաստան - Բնության համաշխարհային հիմանդրամի

2. ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից բարդ և փոխկապակցված աշխարհում շատ տարածված է, որ տեղական իշխանություններն իրենց համայնքի ապագայի համար պետք է ծրագրեն այնպիսի գործընթաց, որը կներգրավի տեղացի ժողովրդին համայնքի կարիքներին երկարաժամկետ լուծումներ տալու համար: Տեղական շահառուների հետ համատեղ համայնքի զարգացման տեսլականը մշակելը իշխանությունների առաջին և ամենակարևոր պարտականություններից մեկն է: Համայնքապետարանները, որպես ժողովրդավար կառույցներ, հաշվետու են իրենց բնակչությանը իրենց որդեգրած զարգացման ռազմավարական պլանի համար: Ուստի, այդ պլանը պետք է լինի առավելագույնս պարզ, հասանելի և իր մեջ պարունակի արդյունքներին հասնելու տեսանելի ուղիներ՝ միաժամանակ, համապատասխանելով տեղի բնակչության կարիքներին և սպասումներին:

Այս ամենին հասնելու համար համայնքապետարանները կազմում են Համայնքի հնգամյա զարգացման ծրագրեր (ՀՀԶԾ): Սակայն հաճախ հեռահար նպատակներին հասնելու ճանապարհին ի հայտ եկած այլ կարիքներն ու անհրաժեշտությունները խոչընդոտ են հանդիսանում համայնքի համար: Որպեսզի նման խոչընդոտները չշեղեն տեղական իշխանություններին իրենց բռնած ուղուց, անհրաժեշտություն է առաջանում մշակելու ավելի կարճաժամկետ զարգացման ծրագրեր, որոնց համար հիմք կձևառայի ՀՀԶԾ-ն:

Այս ամենի իրագործման համար էլ համայնքները մշակում են իրենց համար Տարեկան աշխատանքային պլաններ (ՏԱՊ): ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

3. ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1 Աշխարհագրական դիրք, կլիմա, պտտմական ակնարկ

Արենի բազմաբնակավայր համայնքը ներառում է Վայոց ձորի մարզի 9 բնակավայր, որոնք են Աղավնաձորը, Ագարակաձորը, Արենին, Արփին, Գնիշիկը, Ելփինը, Խաչիկը, Չիվան և Ռինդը: Այս 9 բնակավայրերից 4-ը սահմանամերձ են, իսկ Խաչիկ բնակավայրը գտնվում է անմիջապես Հայ-ադրբեջանական շփման գծի վրա և իրականացնում է սահմանապահ ֆունկցիաներ: Արենի համայնքի տարածքը հիմնականում ընկած է արփա գետի հովտի լայնացած մասում և Երևան Մեղրի ավտոմայրուղու երկարությամբ ձգվում է դեպի հյուսիս արևելք: Համայնքի բնակավայրերն աչքի են ընկնում իրենց կայուն զարգացող ենթակառուցվածքներով և վճռական են իրենց միավորվածությամբ բռնած զարգացման ուղին շարունակելու հարցում:

Համայնքի այժմյան տարածքը հնուց ի վեր ծառայել է որպես Շարուրի դաշտավայրից Վայոց ձոր մտնող կիրճը փակող կարևոր ռազմավարական կետ: Այստեղ են գտնվում պատմաճարտարապետական հայտնի կոթողներ, տեսարժան վայրեր և կարևոր զբոսաշրջային կենտրոններ: Արենի վարչական շրջանի տարածքում է գտնվում Հայաստանի ամենաայցելվող զբոսաշրջային վայրերից մեկը՝ Նորավանքի վանական համալիրը (կառ. 1339 թ., ճարտ. Մովսիկ), ինչպես նաև Արենիի հայտնի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցին (կառ. 1321 թ., ճարտ. Մովսիկ), այստեղ են գտնվում հայտնի Թոշունների և Մազեի քարանձավները: Թոշունների (Արենի-1) քարանձավում 2010 թ.-ին պեղումների ժամանակ գտնվել է աշխարհի ամենահին կաշվե կոշիկը, կանացի ձողտե հագուստը և գինու հնձանը: Այս ամենը թվագրվում է շուրջ 6500 տարի մեզնից առաջ: Արենի համայնքում լայն զարգացում է ապրում գինու տուրիզմը, այստեղ գործում է 8 գինու գործարան: Գնիշիկ վարչական շրջանում են գտնվում հայտնի Արջերի և Սոզրովի

քարանձավները: Սրանք հայտնի ստալակոիտային քարանձավներ են: Աղավաձոր և Ռինդ բնակավայրերի վարչական տարածքում է գտնվում հայտնի պատմական Ուլցյուր գյուղը, որտեղի գերեզմանոցում է հանգչում միջնադարյան հայ հայտնի ճարտարապետ, մանրանկարիչ, ծաղկող Մումիկի աճյունը: Արենի համայնքի հատկապես Արենի և Զիվա բնակավայրերում մեծ թափով է զարգանում տարածաշրջանում զարգացման լուրջ հեռանկարներ ունեցող հյուրատնային բիզնեսը: Արենի բնակավայրում տարեցտարի ավելանում են նաև տնային ռեստորանների թիվը: Համայնքի բոլոր բնակավայրերում ծաղկում է ապրում մշակութային կյանքը, Աղավաձորում կա կառուցված արվեստի դպրոց, համայնքն ունի 3 մանկապարտեզ, 9 միջնակարգ կրթության ուսումնական հաստատություն, 1 գործմաս, որն իրականացնում է սահմանապահ առաքելություն:

Արենին բազմաբնակավայր համայնք է, որտեղ բնակչությանը մատուցվում են բարձրակարգ հանրային ծառայություններ, իսկ բնակիչները ձևավորել են ամուր քաղաքացիական հասարակություն:

4. ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Արենի համայնքի ՏԱՊ-ը կազմված ՀՀԾ-ի հիման վրա: Յուրաքանչյուր տարվա ՏԱՊ-ի իրագործմամբ կարելի կլինի հասնել ՀՀԾ սահմանած հեռահար և մոտակա նպատակներին: Այն հնրավոր կլինի միայն հետևողական և պարտաճանաչ աշխատանքի շնորհիվ: ՏԱՊ իրագործման համար միայն տեղական բյուջեն բավարար չի լինի, ուստի անհրաժեշտություն կառաջանա տարբեր դրամաշնորհային և ներդրումային ֆինանսավորումներ բերել Արենի համայնք, ողջ ծրագրի իրագործման համար: Սրա համար Արենիի համայնքապետարանն ունի անհրաժեշտ կամք ու վճռականությունը, ինչպես նաև բավարար մասնագիտացում ունեցող աշխատանքային կոլեկտիվ:

ՏԱՊ իրագործման համար 2018 թ.-ին պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատվել են հետևյալ կերպ. պահանջվող ընդհանուր գումարը կազմել է 371171.500 հազար դրամ, ընդ որում, ՏԱՊ-ում հստակեցված չեն ֆինանսավորման աղբյուրները, ուստի համայնքապետարանի աշխատակազմը փորձելու է ֆինանսավորման համար դուրս գալ համայնքային բյուջեի սահմաններից: 2018 թվականի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեի և ըստ ՀՀԾ-ի՝ պահանջվող գումարի տարբերությունը (ձեռքվածքը) կազմել է 0 դրամ: 2018 թվականի Արենի համայնքի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմում է 371171.500 հազ. դրամ, այդ թվում՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ 218532.800 հազար դրամ
- Համայնքային բյուջե՝ 152638.746 հազար դրամ

2018 թվականի Արենի համայնքի ՏԱՊ-ով պահանջվող ընդհանուր գումարը բաշխվել է հետևյալ կերպ.

Հիմնարկ/Օախսատեսակ	Տարվա պլան (դրամ)
Արենիի համայնքապետարան աղբահանություն	4.200.000
Արենիի համայնքապետարան այլ մշակութային կազմակերպություն	5.000.000
Արենիի համայնքապետարան ապարատի պահպանում	141.750.000
Արենիի համայնքապետարան արտադրողական դաստիարակություն	15.930.000
Արենիի համայնքապետարան գյուղատնտեսություն	500.000
Արենիի համայնքապետարան ընդհանուր բնույթի այլ ծառայություն	1.200.000
Արենիի համայնքապետարան ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	49.200.000
Արենիի համայնքապետարան կեղտաջրերի հեռացում	3.800.000
Արենիի համայնքապետարան ճանապարհային տրանսպորտ	4.500.000

Հիմնարկ/Օալիսատեսակ	Տարվա պլան (դրամ)
Արենիի համայնքապետարան մշակույթ	4.000.000
Արենիի համայնքապետարան նախադպրոցական կրթություն	58.077.900
Արենիի համայնքապետարան ոռոգում	11.727.600
Արենիի համայնքապետարան պահուստային ֆոնդ	50.686.000
Արենիի համայնքապետարան ջրամատակարարում	9.400.000
Արենիի համայնքապետարան տեղական հատուկ արտոնություններ	7.200.000
Արենիի համայնքապետարան փողոցային լուսավորություն	4.000.000
ԸՆԴԱՄԵՆԸ	371.171.500

Հարկ է նշել, որ Արենի համայնքը՝ ունենալով հարմար աշխարհագրական դիրք, գրավիչ է թե տեղական գործարար կազմակերպությունների, թե օտարերյա ներդրողների համար: Այդ իսկ պատճառով 2018 թ.-ին բացի բյուջետային միջոցներով նախատեսված ծախսերը, նախատեսվում են նաև այլ ներդրումներ, այդ թվում՝

- Մասնավոր հատվածի ներդրումներ
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ

Քանի որ դեռևս հստակեցված չեն ներդրումների չափերը, այդ իսկ պատճառով դրանք չեն նշվում և ներառված չեն տարեկան բյուջեի ծախսային մասում:

5. ԱՐՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արդյունաբերության, Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ), ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը համայնքում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ ՏԱՊ-ով առաջարկվում է բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով համայնքում բարձրացնել գործարար ակտիվությունը՝ ներգրավելով այդ գործընթացներում տեղական և տարածաշրջանային գործարար համայնքի ներկայացուցիչների:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, համայնքի համագործակցությունը փոքր և միջին ձեռնարկությունների և աջակցող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ Արենի համայնքը մշտապես սերտորեն համագործակցել է Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ՋԱԿ) հետ: Հարկ է նշել, որ այս ոլորտում հսկայական անելիքներ կան, քանի որ վերջին շրջանում Արենի համայնքի հատկապես Արենի և Չիվա բնակավայրերում լուրջ վերելք է ապրում ընտանեկան բիզնեսը (տնային ռեստորաններ, հյուրատներ): Ընտանեկան նմանատիպ բիզնեսներին զուգահեռ նաև մեծ աշխուժություն է նկատվում նաև տնայնագործական գինեգործության շրջանում: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ Արենիի համայնքապետարանը նախատեսում է.

- ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում
- Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման համայնքային հայեցակարգային դրույթների իրականացում

- **ՀՀ ՓՄՁ ՋԱԿ-ի Վայոց ձորի մասնաճյուղի հետ սերտ ու համապարփակ աշխատանքի կազմակերպում:**

Հայտնի է, որ համայնքի գրեթե բոլոր բնակավայրերի համար գերակա ոլորտներ են տուրիզմը, գյուղմթերքների վերամշակումը և իրացումը: Եվ այս տեսանկյունից կարևոր է ներդրումների առկայությունը, իսկ որպեսզի ներդրումներն արդարացիված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները: Այստեղ որոշիչ է համայնքապետարանի, ինչպես նաև ՓՄՁ ՋԱԿ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածքաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու առումով:

• **ԱՐԾՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

Այս ոլորտը ևս անչափ կարևոր է համայնքի զարգացման համար: **2018 թ.-ի հունվար ամսվա դրությամբ համայնքի տարածքում գործում է ոլորտը ներկայացնող 4 ընկերություն, որոնք գտնվում են Արենի, Գնիշիկ և Խաչիկ բնակավայրերում, և զբաղվում են հանքարդյունաբերությամբ, մասնավորապես վերամշակում են դեկորատիվ տրավերտին, քվարցիտ և տուֆաավազաքարեր:** Համայնքի տարածքում գործունեություն են իրականացնում նաև վերամշակող արդյունաբերությամբ զբաղվող մի շարք ընկերություններ: Արժե նշել հատկապես **գինու գործարանների** առկայությունը: Հայաստանի համար ազգային համարվող այս ոլորտի **7 ներկայացուցիչ կա Արենի համայնքում**, որոնք արտադրում են աշխարհահռչակ Արենի տեսակի գինին: Կաթի վերամշակող 1 ընկերություն է գործում Ելփին բնակավայրում: Այստեղ գործում է նաև **<<Արենի>> ՀԷԿ-ը**, որն էլեկտրաէներգիա արտադրող միակ ընկերությունն է համայնքում: Կան նաև այլ ընկերություններ, որոնք զբաղվում են սառնարանային տնտեսությամբ, չրերի արտադրությամբ: Արենի համայնքի տարածքում գործում են նաև բազմաթիվ խանութներ, **4 ռեստորան, մեկ հանգստի հովիտ**, ինչպես նաև մի շարք սրճարաններ:

Այս ոլորտում անելիքներ կան այն առումով, որ հարկ է ստեղծել հավասար մրցակցային պայմաններ, որպեսզի ոլորտով զբաղվող ընկերությունների թիվն ավելի մեծ աճ գրանցի: Արդեն իսկ կան ոլորտի զարգացման մշակված հետանկարներ և տեսլական:

Ներդրումների մասով կարելի է նշել մի շարք նախագծեր, որոնք տեղ են գտել Արենիի ՀՀԾԾ-ում: Խաչիկ սահմանապահ բնակավայրում նախատեսվում է կառուցել տեքստիլ արդյունաբերություն, որը լրացուցիչ աշխատատեղեր կապահովի համայնքի բնակիչների համար: Բանակցություններ են ընթանում նաև բնակավայրի տարածքում գինու և շամպայնի գործարան հիմնելու նախագծի շուրջ: Արենի բանակավայրում էլ, ըստ պայմանավորվածությունների, շուտով **<<Թուֆենկյան հոսփիթալիթի>>** ՍՊԸ-ն կսկսի նոր գինու գործարանի, գինու սպայի և հյուրանոցի շինարարական աշխատանքները՝ ապահովելով ավելի քան 80 աշխատատեղ համայնքի բնակիչների համար: Ինչպես պարզորոշ նկարագրված է, Արենի համայնքի ՏԱՊ-ում տեղ են գտած բազմաթիվ ծրագրեր, որոնք իրականացվելու են արտաբյուջետային ֆինանսավորմամբ: Չնայած համաշխարհային տնտեսությունում տագնապալի որոշակի սպասումների, 2018 թ.-ի համար համայնքի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից ՀՀԾԾ-ով պլանավորվել է ընդամենը 5.580 մլն դրամի ներդրում, այդ թվում ըստ ոլորտների՝

- Մշակող արդյունաբերություն 5410.00 մլն ՀՀ դրամ
- Թեթև արդյունաբերություն 170 մլն ՀՀ դրամ

Որից՝ ըստ ներդրողների՝

- «Թուֆենկյան հոսփիթալիթի» ՍՊ ընկերության միջոցներով 5000.00 մլն ՀՀ դրամ:
- «Տյոշ» ՍՊ ընկերության միջոցներով 170 մլն ՀՀ դրամ
- «Գյուղամեջ» ՍՊ ընկերության միջոցներով 240 մլն ՀՀ դրամ:

- Խաչիկ բնակավայրում տեքստիլ արդյունաբերության համար՝ շուրջ 170 մլն ՀՀ դրամ:

Համայնքի արդյունաբերության և մասնավոր հատվածում պլանավորված ներդրումների գերակշիռ մասը մշակող արդյունաբերության ոլորտում է:

Անհրաժեշտ է նշել, որ ներկայացված թվերն ունեն աճելու միտում, քանի որ շատ ներդրող ընկերությունների հետ բանակցությունները դեռևս ընթացիկ փուլում են գտնվում և չկան ներդրումների հստակ չափեր:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

6.1 Կրթություն

2018 թվականին Արենի համայնքի կրթության որակի բարձրացումը համայնքի ղեկավար կազմը դիտում է որպես ոլորտի զարգացման գերակա նպատակ: Այն ամբողջովին արտացոլում է 2016-2025 թթ. «Կրթության զարգացման պետական ծրագրի» հիմնական պահանջները: Կշարունակվեն աշխատանքները դպրոցի խնայողությունների նպատակային օգտագործման ուղղությամբ:

Ուշադրություն է դարձվելու ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և կառավարման մեխանիզմների կատարելագործմանը, հաշվետվողականության համակարգի և գործունեության թափանցիկության բարելավմանը: 2018 թ.-ին կարևոր ուղղություններից կհամարվի նախադպրոցական կրթության նկատմամբ աջակցության և վերահսկողության իրականացումը: Կշարունակվի հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրման գործընթացը /ներառական կրթություն/: Ուշադրության կենտրոնում կմնան պարտադիր ուսուցումից տարբեր պատճառներով դուրս մնացած երեխաներին հանրակրթական համակարգ վերադարձնելու խնդիրները: 2018թ. ՏԱՊ-ով կշարունակվեն դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազննման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների ատեստավորման, մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների կառավարման մեխանիզմների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման գործընթացները:

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի բնակավայրի ՀՀԶԾ-ով և 2018 թ.-ին կրթության ոլորտի համար Արենիի համայնքապետարանի պատվիրատվությամբ նախատեսվել է 5,6 մլն ՀՀ դրամի ներդրում այդ թվում՝

- 2400.00 հազ. ՀՀ դրամ Արենիի միջնակարգ դպրոցում սանհանգույցի կառուցման համար,
- 3000.00 հազ. ՀՀ դրամ Ռինդի միջն. դպրոցի տանիքի վերանորոգման համար,
- 200 հազար ՀՀ դրամ Զիվայի միջն. դպրոցում ճաշարանի կառուցման համար:

Աղավնաձոր և Արփի բնակավայրերում նախատեսվում է մանկապարտեզներին կից հիմնել նախակրթարաններ՝ մանկապարտեզային տարիքում գտնվող և մանկապարտեզ հաճախելու հնարավորություն չունեցող երեխաներին կրթական գործընթացում ներգրավելու համար: Համայնքապետարանն արդեն դիմել է «Կրթության բարելավում» ծրագրին ընդհանուր 16 մլն ՀՀ դրամի ներդրման համար, այդ թվում՝

- 8000.00 հազ. ՀՀ դրամ Արփիի մանկապարտեզին կից նախակրթարան հիմնելու համար
- 8000.00 հազ. ՀՀ դրամ Աղավնաձորի մանկապարտեզին կից նախակրթարան հիմնելու համար

Համայնքի տարածքում գործող կրթական հաստատություններից Արենիի միջնակարգ դպրոցի շենքը 3-րդ կարգի վթարային է և անհրաժեշտություն կա այն հիմնանորոգելու կամ բոլորովին նոր շենք կառուցելու: Նոր շենքի համար նախկին Արենիի համայնքապետարանի կողմից կատարվել է հողահատկացում: Արենի բնակավայրում առկա է նաև մանկապարտեզի խնդիր, քանի որ բնակավայրի մանկապարտեզն ավիրվել է Արցախյան պատերազմի տարիներին և նորը դեռևս չի կառուցվել: Մանկապարտեզի համար կատարվել է հողահատկացում, անց է կացվել էլեկտրականություն, համայնքի կողմից ներդրվել է ծրագրի համար 7 մլն ՀՀ դրամ, իսկ ամբողջ ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 120 մլն ՀՀ դրամ:

Համայնքի տարածքում գործում է 4 մանկապարտեզ՝ Ռինդի, Արփիի, Աղավնաձորի և Ագարակաձորի: ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների միջոցով 2018 թվականին նախատեսվում է 5490,00 հազ. ՀՀ դրամի ներդրում Արփի բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման համար:

Աղյուսակ 1. Արենիի ՀՀԶԾ-ով 2018 թ.-ի համար կարիքների գնահատման և 2018թ.-ի ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը կրթության ոլորտներում

Ոլորտը / ֆինանսավորման աղբյուրը	2018 թ.-ի կարիքների գնահատման արժեքը ըստ ՀՀԶԾ-ի	2018 թ.-ի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՀՀԶԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
Կրթություն, այդ թվում նախակրթարաններ և արտադպրոցական հաստատություններ	35325000	35325000	0
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	21490000	21490000	0
Մեփական միջոցներ	21490000	21490000	0
Վարկային միջոցներ			0
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			0
Համայնքային բյուջե	13835000	13835000	0
Մասնավոր ներդրողներ			0
Այլ աղբյուրներ			0

6.2 Մշակույթ և սպորտ

Արենի համայնքի ՀՀԶԾ-ով 2018 թ.-ին մշակույթի և սպորտի ոլորտների համար պլանավորվել է կատարել 7500,00 հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ 6500,00 հազ. դրամը՝ պետբյուջեով:

- Աղավնաձորի արվեստի դպրոց՝ 500,00 հազ. դրամ
- Չիվայի կուլտուրայի տուն՝ 1000,00 հազար ՀՀ դրամ
- Ելփինի կուլտուրայի տուն՝ 1500,00 հազար ՀՀ դրամ
- Ագարակաձորի հանդիսությունների սրահ՝ 2500,00 հազար ՀՀ դրամ
- Սպորտային համայնքային միջոցառումներ (Ֆուտզալ, բասկետբոլ, ֆուտբոլ, շախմատ և այլն) շուրջ 1000,00 հազար ՀՀ դրամ
- Արենի համայնքի մշակութային միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում՝ 800,00 հազար ՀՀ դրամ (ԳՊԼ):

Աղյուսակ 2. Արենիի ՀՀԶԾ-ով 2018 թ.-ի համար կարիքների գնահատման և 2018թ.-ի ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը մշակույթի և սպորտի ոլորտներում

Ոլորտը / ֆինանսավորման աղբյուրը	2018 թ.-ի կարիքների գնահատման արժեքը ըստ ՀՀԶԾ-ի	2018 թ.-ի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՀՀԶԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
Մշակույթ և սպորտ	7300000	7300000	0
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝			0
Սեփական միջոցներ			0
Վարկային միջոցներ			0
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	800000	800000	0
Համայնքային բյուջե	6500000	6500000	0
Մասնավոր ներդրողներ			0
Այլ աղբյուրներ			0

6.3 Առողջապահություն

Հաշվի առնելով համայնքում առողջապահության ոլորտի ներկա վիճակը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը համայնքում սահմանվել է որպես ՀՀԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

- Տեղային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավում
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,

Այսօր Արենի համայնքի միայն Գնիշիկ բնակավայրում չկա բուժկետ, մնացած բնակավայրերն ապահովված են բուժկետով: Գործում է 2 Առողջության առաջնային պահպանման կենտրոն (ԱԱՊԿ): Արենիի ԱԱՊԿ-ն սպասարկում է Արենի, Խաչիկ, Չիվա Ռինդ և Ելփին բնակավայրերը, իսկ Աղավնաձորի ԱԱՊԿ-ն՝ Աղավնաձոր և Արփի բնակավայրերը: Ագարակաձորի բուժկետը սպասարկվում է մարզկենտրոն Եղեգնաձորից, իսկ Գնիշիկ բնակավայրն ընդհանրապես ապահովված չէ բժշկական ծառայություններով:

6.4 Սոցիալական պաշտպանություն

2018 թ.-ի հունվարից, համայնքների խոշորացման հետևանքով, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Արենի, Գլաձոր, Ջերմուկ և Եղեգիս համայնքներում արդեն իսկ կան սոցիալական աշխատողներ: Սա լուրջ առաջընթաց է ոլորտային տեսանկյունից: Արենի համայնքի բնակչությունը կազմում է 11784: Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ կազմում է շուրջ 15 %:

Օրագրվում է 2018 թ.-ի ընթացքում ոլորտային նպատակների իրականացման համար սոցիալապես անապահով խավի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված վճարներ տրամադրել: 2018 թվականի համար նախատեսվում է ոլորտի համար հատկացնել համայնքային բյուջեից շուրջ 7200.00 հազ. ՀՀ դրամ Սոցիալական աշխատողի միջոցով վեր է հանվել ընտանիքի կամ անհատի կարիքավորության աստիճանը և գնահատված արժեքով փոխհատուցվում է առաջացած կարիքները:

Շատ կարևոր է բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունները մատչելի և որակյալ դարձնելը, քանի որ այն նոր ծառայություն է և բնակչության վստահությունը ծրագրի անաչառ և բոլորի

համար հավասար լինելու հանդեպ մեծ ձեռքբերում կլինի: Ծրագրերի կենսագործմանը կուղղորդվեն Արենի համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցի ողջ ներուժը:

SUՊ-ում տեղ գտած գործողությունների պլանը հետևյալն է.

- Բնակավայրերում սոցիալական պլանների կազմում և իրականացում:
- Արենի համայնքի բնակավայրերի մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում: / Նախատեսվում է իրականացնել արտաբյուջետային միջոցներով:
- Ձուլված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին ֆինանսական աջակցություն: / Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մայիսյան հաղթանակներին նվիրված միջոցառումների շրջանակներում համայնքային բյուջեի միջոցներով:

Ծրագրային աշխատանքների իրականացման համար ցանկալի է, որ բացի պետական և համայնքային բյուջեների միջոցներից լինեն նաև որոշակի ներդրումներ միջազգային, դոնոր և մասնավոր կազմակերպությունների կողմից, որոնք կնպաստակառուցվեն SUՊ 2018-ով կամ ՀՀԶԾ-ով ոլորտում նախատեսված աշխատանքների իրականացմանը: 2018թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը: Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարունակական աջակցության ցուցաբերումը: Պետությունը ուղղորդված և կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կայացման ուղղությամբ, որոնք նաև ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրային աշխատանքներից են: Ներկայում Արենի համայնքի կենտրոն հանդիսացող համանուն բնակավայրի միջնակարգ դպրոցում ներդրված է ներառական կրթական համակարգ: Արենիի համայնքապետարանը պետք է հետևողական գործունեություն ծավալի այս ուղղությամբ, որպեսզի համայնքի մնացած բնակավայրերում էլ աստիճանաբար ներդրվի ներառական կրթության համակարգը: Սոցիալական ծառայության մատուցման նախապայման է բնագավառում ընդգրկված աշխատող(ներ)ի մասնագիտական հմտության շարունակական կատարելագործումը:

Միաժամանակ, հարկ է նշել նաև բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտության մասին: 2018 թ.-ին, ինչպես միշտ, զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իր նպատակամետ քաղաքականությունը: Սակայն այս ուղղությամբ հսկայական անելիքներ կան նաև տեղերում: Համայնքապետարանն ու ոլորտի համար պատասխանատու աշխատանքային խումբը ջանք չեն խնայի, ոլորտային հարցերին առավելագույնս լուծում տալու համար: Կարևոր է նշել հանգամանքը, որ միայն ներքին ֆինանսական միջոցներով բոլոր ծրագրային նախագծերին լուծում տալն անհնարին կլինի, ուստի հարկավոր է նպատակաուղղվել դեպի արտաբյուջետային միջոցները (դոնոր կազմակերպություններ, դրամաշնորհներ և այլն):

7. ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Գյուղատնտեսություն

Տարածաշրջանի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտն ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՀՀԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված

ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն: Արենի համայնքի ՀՀԶԾ-ում գյուղատնտեսության ոլորտի առաջնային թիրախներից են.

1. Մերմաքուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմաբուսադրության համար
2. Բանջարեղենի և պտղի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնումը
3. Բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնումը
4. Կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնումը
5. Մշակությունից դուրս մնացած վարելահողերի աստիճանաբար շրջանառության մեջ ներգրավումը
6. Հակակարկտային կայանքների ավելացումը
7. Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը
8. Բազմամյա տնկարկների ավելացումը
9. Ինտենսիվ այգիների հիմնումը
10. Կաթիլային ռոտզմամբ այգիների ավելացումը
11. Տարածաշրջանի համար թիրախային հանդիսացող խաղողագործության զարգացումը:

Ոլորտի զարգացման համար, իհարկե, բոլոր 11 կետերն էլ անչափ կարևոր են, սակայն անհնարին է ամբողջ իրականացնել միայն մի տարվա ընթացքում: Այդ իսկ պատճառով ՏԱՊ-2018-ով նախատեսվում է միջոցներ ձեռնարկել սառնարանային տնտեսությունների ավելացման ուղղությամբ, քանի որ արդեն իսկ սառնարանային տնտեսություններ կան հիմնված Ռինդ և Զիվա բնակավայրերում: Հակակարկտային կայանքներ կան տեղադրված Արենի և Աղավնաձոր գյուղերում, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման համար արդեն իսկ կան պայմանավորվածություններ ներդրում անելու պատրաստ կազմակերպության հետ:

Ռոտզման ցանցի կարգավորումը շարունակում է մնալ Արենի համայնքում կարևոր հիմնախնդիրներից մեկը: 2018 թ.-ի տարեկան բյուջեով նախատեսված է Արենի բնակավայրում իրականացնել դրենաժ և 3-4 մայր առուների մաքրման և նորոգման աշխատանքներ: Ռոտզման ջրագծերի նորոգման կամ կառուցման համար 2018 թ.-ի տարեկան բյուջեով նախատեսված են աշխատանքներ համայնքի բոլոր բնակավայրերում ընդհանուր 19.900,00 հազ ԶՀ դրամ բյուջեով: Հատկանշական է, որ ողջ գումարը հատկացվելու է համայնքային բյուջեից:

Աղյուսակ 3. Արենի համայնքի ՀՀԶԾ-ով 2018թ.-ի համար կարիքների գնահատման և 2018թ.-ի ՏԱՊ-ում քննարկված ներդրումային ծրագրերի համադրումը գյուղատնտեսության ոլորտում

Ոլորտը / ֆինանսավորման աղբյուրը	2018 թ.-ի կարիքների գնահատման արժեքը ըստ ՀՀԶԾ-ի	2018 թ.-ի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՀՀԶԾ-ի տարբերությունը (ձեռքվածք)
Գյուղատնտեսություն, այդ թվում			0
Ռոտզման ջրագծեր	19900000	19900000	0
ՀՀ պետական բյուջե, այդ թվում			0
Սեփական միջոցներ			0
Վարկային միջոցներ			0
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			0
Համայնքային բյուջե	19900000	19900000	0
Մասնավոր ներդրողներ			0
Այլ աղբյուրներ			0

Անասնաբուծություն

Պետական ֆինանսավորմամբ 2018 թ. տարբեր հիվանդությունների դեմ պատվաստում կատանան 4364 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, 1620 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 385 գլուխ խոզեր, 20890 թև թռչուններ:

Շարունակվելու է Հայ-Շվեյցարական համատեղ «Անասնաբուծության զարգացում Հայաստանի հարավում» ծրագիրը, որի շրջանակներում Արենի համայնքապետարանը Ելփին բնակավայրի «Երփին» գյուղատնտեսական կոոպերատիվի հետ համատեղ համագործակցում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ հետ:

Նույն ծրագրի շրջանակներում 2018 թ.-ին կսկսվեն նաև Ելփին, Արենի, Խաչիկ, Չիվա, Գնիշիկ, Արփի, Ագարակաձոր և Աղավնաձոր բնակավայրերում ջրախնոցների, փարախների և հովվատների կառուցման աշխատանքները: Համայնքների անասնաբուծիչների մոտիվացման համար սահմանվել է նախկինից շուրջ կրկնակի բարձր աշխատավարձ, ինչպես նաև անասնաբուծասպասարկումը բնակիչների համար կիրականացվի բացարձակ անվճար: Գյուղատնտեսության բոլոր ճյուղերի զարգացման նպատակով Արենի համայնքը կշարունակի սերտ համագործակցությունը Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի (ԳԱՄԿ), ինչպես նաև ցածր տոկոսներով գյուղատնտեսական վարկավորում իրականացնող Ունիվերսալ վարկային կազմակերպությունների (ՈՒՎԿ) մասնագետների և համայնքների անասնաբուծիչների հետ կանցկացվեն սեմինար խորհրդակցություններ:

7.2 Բնապահպանություն

Չնայած, որ Արենի համայնքում չկան որպես այդպիսիք գրանցված բնապահպանական կազմակերպություններ, Արենի համայնքապետարանը 2018 թ.-ի հունվարից ունի սանիտարական մաքրության և էկոհամակարգի պահպանման պատասխանատու: Մաքուր Հայաստան ծրագրի շրջանակներում պարբերաբար այցելություններ են կազմակերպվում համայնքի բնակավայրեր, ուսումնասիրվում են աղբակույտերը, բնապահպանական տեսանկյունից վտանգ ներկայացնող երևույթները և մշակվում են խնդիրներից խուսափելու կամ դրանք լուծելու տարբերակներ: Նախատեսվում է նաև 2018 թ.-ին իրականացնել «Մաքուր Արենի» ծրագիրը, ըստ որի տարվա վերջում մրցանակ է տրվելու լավագույն բնակավայրին ըստ աղբավայրերի և փողոցների մաքրության և այլ լավ ցուցանիշների:

Համայնքի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով 2018թ.-ին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Արփա գետի հունի ամբողջական մաքրում
- Ելփին գետի հունի ամբողջական մաքրում
- Պարբերական մաքրման աշխատանքներ Նորավանքի կիրճում
- Արենի համայնքի տարածքում մասնավոր հանգստի գոտիների վրա խիստ վերահսկողական մեխանիզմների ներդրում, որպեսզի տեղադրվեն աղբամաններ ու հոգ տարվի շրջակա միջավայրի մաքրության պահպանման համար
- Բոլոր բնակավայրերի գոնե կենտրոնական փողոցներում աղբամանների տեղադրում
- Աղբահանության ավելի ինտենսիվ կազմակերպում բոլոր բնակավայրերում
- Աղբավայրերի բարեկարգում, կամ նոր աղբավայրերի ստեղծում
- Իրականացնել ծառատունկ և նմանատիպ այլ միջոցառումներ
- Շարունակել համագործակցությունը WWF Հայաստան և Գնիշիկ պահպանվող լանդշաֆտ (ԳՊԼ) կազմակերպությունների հետ, որով պայմաններ են ստեղծվում Արենի համայնքի տարածքի կենդանական և բուսական աշխարհի պահպանման և բազմազան համար:

Ընդհանուր առմամբ 2018 թվականի ՏԱՊ-ով և ՀՀԶՕ-ով նախատեսվում է ուղորտում իրականացնել շուրջ 19498.00 հազար ՀՀ դրամի ներդրում, որից 15818.00 Հազար ՀՀ դրամը՝ համայնքային բյուջեով և 3679.20